ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N ՄՊ/56-2021 *ք.Արտաշատ*

„09„ 03 *2021թ.*

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի և 9-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի բնակիչների սոցիալական աջակցության վերաբերյալ դիմումների ուսումնասիրության և մարզպետին դրամական օգնության տրամադրման առաջարկների ներկայացման գործընթացը կազմակերպելու նպատակով ստեղծել հանձնաժողով՝ հետևյալ կազմով.

1) ***Սուսաննա Կտրակյան*** - հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ

2) ***Լեոնիկ Խաչատրյան***-- հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ

3) ***Հովհաննես Ավետիսյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի խորհրդական

4) ***Նելլի Սիմոնյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությունում առանձին գործառույթներ համակարգող խորհրդական

5) ***Հովհաննես Ուրֆալյան*** - հանձնաժողովի անդամ, Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետարանի ՏԻ և հանրապետական գործադիր մարմինների հարցերով վարչության ավագ մասնագետ

2. Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն հավելվածի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Восстановимая подпись

X

ՌԱԶՄԻԿ ԹԵՎՈՆՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: TEVONYAN RAZMIK 2008610616 ***Ռ. ԹԵՎՈՆՅԱՆ***

Հավելված
ՀՀ Արարատի մարզպետի
2021 թ.մարտի 9-ի N 72/36-2021 որոշման

ԱՇԽԱՏԱԿԱՐԳ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույնով սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի բնակիչների սոցիալական աջակցության վերաբերյալ դիմումների ուսումնասիրության և մարզպետին դրամական օգնության տրամադրման առաջարկների ներկայացման գործընթացը կազմակերպելու կարգն ու պայմանները՝ աշխատակարգը:

II. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

2. Հանձնաժողովը իր գործունեությունն իրականացնում է նիստերի միջոցով: Հանձնաժողովի նիստերը հրավիրվում են յուրաքանչյուր ամսվա 15-ին և 30-ին, եթե աշխատանքային օր չէ՝ հաջորդ աշխատանքային օրը և (կամ) ըստ անհրաժեշտության:

3. Հանձնաժողովի նիստն իրավազոր է, եթե նիստին մասնակցում է Հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Հերթական նիստն սկսվում է օրակարգի հաստատմամբ: Հանձնաժողովի անդամների նվազագույն թիվը պետք է լինել 5, առավելագույնը՝ 10:

4. Հանձնաժողովի նիստերն արձանագրվում են: Հանձնաժողովի նախագահի կամ հանձնաժողովի անդամի պահանջի դեպքում նրա առարկությունը կամ վերապահումն արձանագրվում է: Հանձնաժողովի նիստերի արդյունքում կազմված արձանագրությունները ստորագրվում են հանձնաժողովի նախագահի և հանձնաժողովի անդամների կողմից, իսկ համապատասխան առաջարկությունը ներկայացվում է մարզպետի մակագրությանը:

5. Հանձնաժողովի նիստերում, բացի հանձնաժողովի անդամներից, իրավունք ունեն ներկա գտնվելու նախագահի կողմից հրավիրված անձինք՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

III. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳ

6. Հանձնաժողովի որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ՝ նիստի մասնակիցների ձայների կեսից ավելի ձայներով:

7. Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ քվեարկությունների ժամանակ ունի մեկ ձայնի իրավունք:

8. Ձայների հավասարության դեպքում հանձնաժողովի նախագահի ձայնը վճռորոշ է:

IV. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԸ

9. Հանձնաժողովի նախագահը՝

1) հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը

2) ապահովում է հանձնաժողովի բնականոն գործունեությունը

3) հանձնաժողովին է ներկայացնում նիստերի օրակարգերի նախագծերը

4) համակարգում է հանձնաժողովի աշխատանքը

5) հանձնաժողովի ղեկավարի բացակայության դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի անդամներից որևէ մեկը

V. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐԸ

10. Հանձնաժողովի անդամները՝

1) իրավունք ունեն՝

ա. հարցեր ներկայացնելու հանձնաժողովի քննարկմանը,

բ. առաջարկություններ ներկայացնելու հանձնաժողովի գործունեության, ինչպես նաև նիստի օրակարգում ընդգրկված հարցերի վերաբերյալ,

գ. ծանոթանալու հանձնաժողովի նիստերի արձանագրություններին և անհրաժեշտության դեպքում, կատարելու դիտողություններ և առաջարկություններ,

2) մասնակցում են հանձնաժողովի աշխատանքներին,

3) հանձնաժողովի նիստին հանձնաժողովի անդամի բացակայության դեպքում վերջինս ծանոթանում է նիստի արձանագրությանը:

VI. ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐՈՒՄԸ

11. Հանձնաժողովի գործունեությունը դադարում է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզպետի որոշմամբ:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ. ԹԵՎՈՆՅԱՆ